## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ
10 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 206-Ա

### ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԿԱԼՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, 10.06.2008թ.<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ-117-Ն օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով, որ հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում,չի հակասում քաղաքաշինական նորմերին,չի առաջացնում սերվիտուտ,հիմք ընդունելով Չկալով գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 30.11.1991թ. թիվ 7 որոշումից քաղվածքները և քաղաքացի Վարդգես Սերյոժայի Հակոբյանի դիմումը՝
Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Վարդգես Սերյոժայի Հակոբյանի /ծնված՝ 15.08.1954թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Չկալով, 3-րդ փողոց 16/1 հասցեում 06-089-0010-0002 ծածկագրում գտնվող բնակելի տան,բնակելի տան բաց պատշգամբի, նկուղի,նկուղի բաց պատշգամբի,անասնաշենքի և 0,22354 հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ:
2.Վերականգնել և ճանաչել Վարդգես Սերյոժայի Հակոբյանի /ծնված՝ 15.08.1954թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Չկալով 06-089-0026-0015 ծածկագրում գտնվող 0,12125 հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ:
3. Վերականգնել և ճանաչել Վարդգես Սերյոժայի Հակոբյանի /ծնված՝ 15.08.1954թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Չկալով 06-089-0104-0040 ծածկագրում գտնվող 1.39697 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:
4. Վերականգնել և ճանաչել Վարդգես Սերյոժայի Հակոբյանի /ծնված՝ 15.08.1954թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Չկալով 06-089-0104-0047 ծածկագրում գտնվող 0,65654 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:
5.Վերականգնել և ճանաչել Վարդգես Սերյոժայի Հակոբյանի /ծնված՝ 15.08.1954թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Չկալով 06-089-0104-0066 ծածկագրում գտնվող 0,23912 հա մակերեսով խոտհարքի նկատմամբ:
6.Վերականգնել և ճանաչել Վարդգես Սերյոժայի Հակոբյանի /ծնված՝ 15.08.1954թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ 06-035-0327-0005 ծածկագրում գտնվող 1.23592 հա մակերեսով խոտհարքի նկատմամբ:
7.Վերականգնել և ճանաչել Վարդգես Սերյոժայի Հակոբյանի /ծնված՝ 15.08.1954թ./

սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ 06-035-0333-0006 ծածկագրում գտնվող 0,5865 հա մակերեսով խոտհարքի նկատմամբ
8.06-089-0010-0002 ծածկագրում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային <<ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Չկալով 3-րդ փողոց, 16/1 բնակելի տուն>> հասցե:
9.06-089-0026-0015 ծածկագրում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային <<ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Չկալով 4-րդ փողոց, 10/1 հողամաս>> հասցե:
10.Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
11. Բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,կառուցված չէ առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
12. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 25 թ. հունիսի 10
ք.Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 207-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20–Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝
Որոշում եմ.

1.2025 թվականի հունիսի 20-ին ժամը 12-00-ին ՀՀ, Լոռու մարզի, Թումանյան համայնքի, Թումանյան քաղաքի, Սմարթ սենյակում գումարել Թումանյան համայնքի ավագանու հերթական նիստ, հետևյալ օրակարգով.

1) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2025թ. հունիսի 20-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին
2) Թումանյան համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին
3) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 22-ի << Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 104-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովների նախագահների և քարտուղարների մասին
5) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական նիստի օրը որոշելու մասին

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 25թ. հունիսի 13
ք.Թումանյան